

Համաստեղ

Նապաստակի մը օրագիրը

Առաւօտ կանուխ դուրս ելաւ խոտերուն, ծառերուն փաթթուած, կաղամբի գոյնով, մատղաշ արեւ մը կար: Աբէն Յոտուրտացի, ետ առաջ երկնցայ, շառփ շառփ ականջներս Իրարու զարկի: Չգո՛յշ, աղմուկ մը, Իսկույն տունս մտայ ու հսկեցի: Ոչինչ, թերեւ տերեւ մըն էր վար ինկաւ: Նորէն դուրս ելայ, չորս դիս նայեցայ ու հոփ ցատկեցի բանջարանոցը:

Այս թռչունները ո՛րքան շաղակրատ են, Աստուած իմ. հոս կը թռչին, հոն կը թռչին. կըտ կըտ, կտուցնին հոս կը զարնեն, հոն կը զարնեն ու թեւ թեւի, չգիտես, ո՞ր աշխարհներ կը թռչին: Սիրտս դող կ'ելլէ, երբ անոնց ստուերները յանկարծ քովէս կանցնին, երբ ծառերէն պտուղներ թըփ վար կը ձգեն:

Որքա՛ն կը սիրէի ես ալ ուրիշ աշխարհներ տեսնել, Է՛՛՛, եթե ես ալ թռչունի պէս թեւեր ունենայի, ունենայի նաեւ սա բանջարանոցի աքաղաղին ծայնը... Ի՞նչ կըլլար՝ սա գեղեցիկ, արծաթեայ մուշտակիս վրայ երկու լայն թեւեր ըլլային: Կտուց ունենալ չէի սիրեր, իմ պոչը ճերմակ ծաղիկներու փունջին չափ գեղեցիկ է: Կ'ուզէի լոկ զոյգ մը լայն թեւեր՝ բարձրէն թռչելու ու աքաղաղի զիլ ծայնով երգելու համար...

Հի՛, մի՛ խնդուքս չեմ կրնար զսպել ամէն անգամ, երբ սա անծոտ(կեղտոտ) անծեղին (շատախօս թռչուն) ծայնը կը լսեմ: Իր փոքրիկ քոսոտ ձագուկները, բոյնէն դուրս սա տանձենիին չորցած ճիւղերուն վրայ կը շարէ, ու ինք՝ մեջտեղը կեցած՝ կը սկսի երգել խէ՛, խէ՛: Երգած պահուն մարմինը ետ առաջ կը շարժի, վիզը այնքան կ'երկնցնէ ու կը պոռայ, որ կարծես կոկորդիս մեջ խոշոր կեռաս մը կայ:

Հի՛, հի՛ խնդուքս կու գայ ամէն անգամ, երբ սա անծեղը կը տեսնեմ:

2

Այսօր թուփերուն տակէն սահելով կամաց մը դդմանոցը մտայ: Թումբին վրայ երկնցած՝ տեսայ սատկած օծ մը արագիլի մը կտուցէն ինկած. շուրջը կը բզբզային կանաչ ու փայլուն իշամեղուներ:

Սովորականին պէս, խոշոր ու ոսկեգոյն դդումի մը ետեւ պահուըտեցաւ: Զը՝22, խշրտուք մը: Ոչինչ, միեւնոյն կրիան է, նախշուն խեցիով (պատեան), որ ամէն օր, միեւնոյն ժամանակ, միեւնոյն ճամփով կանցնի, չգիտես ո՞ր կերթայ:

Չորս ճանկերը դուրս ձգած՝ վիզը այնքան դուրս ցցած է, որ կարծես խեցիէն դուրս պիտի ելլէ: Ի՞նչ տգեղ է, Աստուած իմ, Սակայն կ'ըսեն, որ այն գիտէ աշխարհի ստեղծագործութիւնը, կը յիշէ, թե երբ շինուեցաւ խաթուն Մահայե՛նց խոշոր տանձենին:

3

Այսօր, իրիկնադէմին, դդմանոցէն լսեցի միեւնոյն անծեղին ձայնը: Զի՛, հի՛, եթէ սա սպիտակ աքիսին (գիշատիչ մը որ հաւնոցի անասունները կը հալածէ) վրայ կաղամբի տերեւներ փակցնենք, ճիշդ ու ճիշդ կ'ունենանք մեր երանելի անծեղը...

4

Կեսօր է: Ամեն դի՛ խաղաղ: Մեղուները տակաւին աստղադդումի ծաղիկներուն շուրջ կը դառնան: Գլխուս վերեւ մժեղները պարս (մեղուներու խումբ) կու գան: Զեռուէն կը լսեմ միայն փայտփորին դրգ, դրգ ձայնը ու ես՝ ականջներս ետ առաջ ձգած, երեք ոտքերս ծալած ու ետեւի մէկ ոտքս երկնցուցած, դդումի լայն տերեւներուն տակ, աչքերս բաց գնացայ:

Զգիտեմ՝ որքան քնացայ: Յանկարծ ականջներես կախուեցայ օդին մեջ: Ա՛՜՜ Աստուած իմ, բանջարավաճառին փոքրիկ մանուկն էր: Տնցուեցայ, ոտքերս իրար խառնեցի ու վերջապէս ձեռքը խածի ու փախայ: Մանուկը սկսաւ լալ: Ա՛հ՝ այդ փոքրիկ դեւին ձեռքէն հազիւ ազատեցայ:

5

Այս առաւօտ կանուխ, տունես քիչ հեռու, բանուկ (յաճախ գործածուած) ճամփուն վրայ տեսայ լեռներու պէս իրարու ետեւ շարուած ուղտերու կարաւան մը: Ամէն անգամ, որ կ'անցնին անոնք, ինծի այնպէս կը թուի, թէ հսկայ ամպերն են, որ վար կ'իջնեն, ոտքի կ'ելլեն ու ետեւէ ետեւ կարաւան կը կազմեն: Սակայն ի՞նչպէս եւ ո՞րտեղէն, նորէն վիզերնին տնկած եւ առջեւի երկու ոտքերնին ծալած, ետեւի ոտքերու թափով(ուժ) դեպի երկինք կը ցատկեն: Այդ հսկաները առանց թեւի ի՞նչպէս պիտի թռչին, Աստուած իմ:

6

Այսօր առուի (գետակ) մը եզերքը փոքրիկ լեռան մը ձեւով մարդ մը, բահը գլխուն տակ, երկու ծունկները ցցած՝ քնացեր էր: Առաջին անգամ հսկայ ապառաժ (ժայռ) մը կարծեցի ու հոփ ցատկեցի ծունկերուն վրայ: Յանկարծ զգացի՝ ժաժ (չոր ճիւղի բեկորներ) ելաւ, ծունկները շարժեցան: Ցատկեցի իսկոյն ու փախայ: Այն ատեն միայն գիտցայ, որ պառկողը ջրտուր մըն էր:

7

Գիշեր: Լուսնական ո՛րքան լայն ու կլոր է, այնքան նման բանջարանոցի խոշոր դդումին (Արդեօ՞ք դդում մը չէ): Մի քիչ անօթի էի: Ուզեցի Աղբար Թորիկենց բանջարանոցը մտնել: Կամաց մը պատէն վար նետուեցայ, ինծի հետ վար ձգելով ականջները շշած խխունջ մը: Ուռենիի մը տակ, կլոր ու լայն սունկի մը վրայ պազած՝ տեսայ, որ կանաչ գորտ մը, աչքերը դուրս ձգած, լուսնական կը դիտեր: Չիս որ տեսաւ՝ սունկին տակ կորսուեցաւ յանկարծ: Չգո՛յշ, հեռուէն շատ մութ բան մը անցաւ արագ: Թերեւս ոգևի մըն էր: Թուփերուն տակէն անցայ կամաց: Հը՛շշ, վտանգ կայ: Բանջարավաճառին կինը ճրագը դեռ նոր կը մարեր:

8

Այսօր արեւին տակ կը քալէի, երբ տեսայ, որ սեւ ու այլանդակ ոգևիի պէս բան մը ինձ կը հետեւէր: Սկսայ փախչիլ արագ: Ա՛հ, Աստուած իմ, անտառին ծառերը հսկայ բանակներու պէս ոտքի ելան ու իմ հակառակ ուղղութեամբ սկսան արշաւ մը: Այդ մութ կենդանին որքա՛ն արագ կը վազէ, ճիշդ ոտքերուս քովէն: Կանգնեցայ յանկարծ. կենդանին ալ կանգնեցաւ: Հոս ցատկեցի, հոն ցատկեցի, մինչեւ վերջապէս ստուգեցի, որ այդ այլանդակ կենդանին ուրիշ բան չէր, եթէ ոչ իմ ստուերը:

9

Միջօրէի մօտ է. ամէն ինչ՝ խաղաղ: Չորցած առուի մը մէջ սկսայ միջատներուն հետ խեղկտուկ մը: Երբեմն ալ կռնակիս վրայ պառկած կը խեղկտայի արեւաճառագայթներուն հետ, երբ հսկայ եզ մը ճարակելով (վնաս հասցնել) ինծի մօտեցաւ: Եզան վիզը կար մետաղեայ զանգակ մը: Մի՞թէ իր մարմնի մէկ մասը չէ այդ զանգակը. ես այդ չգիտեմ: Ի՞նչ հսկայ է, աստուած իմ: Ոտքերէն մի քիչ հեռու մանկլավիկի (ուրիշի կամքին խամաճիկ եղող անձ) մը պէս այլանդակ կը ցատկոտեր ուռեցած գորտ մը: Եզը կը ճարակեր ու միեւնոյն ատեն իր պոչով իր գլխու չանչումով կը փախցներ նաեւ ճանճերը, որոնք կը սիրէին կոտորներուն վրայ թառիլ (նստիլ):

Եզը երբ զիս տեսաւ, պահ մը կանգ առաւ, աչքերը խոշորցուց, ականջները չթեց ու գլուխը իմ կողմ չանչեց, հեռուն իմ վրայ նետելով շողինքը(անասունի թուք): Ես ցատկեցի ընդոստ(մէկէն ի մէկ). ետեւ նայեցայ, որ եզը նորեն իր ճարակով (կեր) զբաղուած էր: Նոյն պահուն տեսայ, որ մողեզ մը զարհուրանքով (սարսափ) առուն վար իջաւ, իր հետ գլտորելով փոքրիկ խժեղներ: Ա՛շ, Աստուած իմ, մողեզին պոչը ամբողջ, մէջքին կիսով կտրուած էր: Այն ատեն միայն գիտցայ, որ պատանի խաշնարածներ(հովիւ) շատ հեռու չէին: Ցանկապատէ մը կամացուկ ներս սահեցայ:

Հոն տեսայ, որ երկու նապաստակներ իրարու հետ կը խաղային: Առաջին անգամ, երբ զիրար նկատեցինք, սուկացինք: Յետոյ իրարու մօտեցանք, իրարու պոչ հոտուտացինք: Այդ կերպով ծանօթացանք իրարու ու սկսանք խեղկտալ, իրարու վիզ փաթթուելով: Մէկը որքա՛ն գեղեցիկ էր... Մենք, երկուքս ալ անոր հետն էր, որ կխեղկտայինք (անհամ կատակներ ընել)...

10

Այս գիշեր երազիս մէջ տեսայ, որ այն մէկին գլուխը խոշոր կաղամբ մըն էր եղեր:

11

Առաւօտ կանուխ գացի հանդիպեցայ այն մէկին: Գլուխը միեւնոյնն էր: Միասին կաղամբ ուտելու գացինք: Դմանոցէն անցած ատեն, աւա՛ղ, տեսայ, որ ան խոշոր դդումը չկար: Ճիշտ մօտը ինկած էր բանջարավաճառին ծրխամորճն ու ծխատուփը: Այդ օր Երկուքս միասին խնդացինք այն քոսոտ անձեղին վրայ: Է՛հ, որքա՛ն երջանիկ եմ:

Հոս կը վերջանայ նապաստակին օրագրութիւնը. որովհետեւ նոյն օրը երկու նապաստակներ կաղամբներու լաւ ճաշէ մը յետոյ, երբ կը սիրուտէին, իրարու կից փաթթուելով, նոյն պահուն անցած էր որսորդ մը իր որսկան շուներով: